ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՎԹԱՇԵՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Դավթաշենի 3-րդ թաղ", (+374 11) 518-282,էլ" փոստ՝ davtashen@yerevan.am

№ 29/Ն/48433-25

«_27_» ____08__ 2025թ.

«ՎԵԳԱՍ ՄՈԹՈՐՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ՝ ԺՈՐԱ ԱՂԱՍՅԱՆԻՆ

(Հասցե՝ Ք.Երևան, Լենինգրադյան 21/2
հեռ. +37477882688
էլ. հասցե vegasmotors48@gmail.com)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և **«ՎԵԳԱՍ ՄՈԹՈՐՍ»** ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2025 թվականի հունիսի 24-ին կնքված «**ԵՔ-ԳՀԾՁԲ-25/101**» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ծառայողական ավտոմեքենայի վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն) համաձայն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ Ծառայությունը պետք է մատուցվի Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին և N 1.1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Ընթացակարգի արդյունքում «ՎԵԳԱՍ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն կողմից 2025 թվականի օգոստոսի 14-ին Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի Ընդհանուր բաժին ներկայացրած՝ թիվ 44420-25 գրությամբ հավաստում է որ, Ընկերությունը չի կարող կատարել Պայմանագրով ստանձնած պարտականությունները, և խնդրել է դադարեցնել պայմանագիրը:

Այսպիսով, Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ կատարողի կողմից չեն պահպանվել Պայմանագրի 1.2-րդ կետով նախատեսված պահանջները, մասնավորապես՝

Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցումը չի իրականացվել Պայմանագրի N2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցին համապատասխան:

Հիմք ընդունելով վերոգրյալը Պայմանագիրը ենթակա է լուծման համաձայն Պայմանագրի 2.1.3 կետի.

Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորոն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին

բ) խախտել է ծառայությունների մատուցման ժամկետը

ՀՀ քաղաքացիական օրենագրքի 408-րդ հոդվածի՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենագրքի 466-րդ հոդվածի 2- րդ մասի՝« Պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում»:

ՀՀ քաղաքացիական օրենագրքի 466-րդ հոդվածի 3- րդ մասի «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Այլ պարագայում համաձայն ՀՀ քաղաքացիական օրենագրքի 468-րդ հոդվածի 2- րդ մասի՝ «Կողմը կարող է պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջը դատարան ներկայացնել միայն պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումն ստանալուց կամ այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո, իսկ դրա բացակայության դեպքում՝ երեսնօրյա ժամկետում կներկայացվի պայմանագրի միակողմանի լուծման գործընթացը:

ՀՀ քաղաքացիական օրենագրքի 469-րդ հոդվածի 5- րդ մասի «Եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները»:

Հաշվի առնելով Պայմանագրի 2.1.3 կետը և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուն **միակողմանի ամբողջությամբ** լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ բանկային երաշխիքների գումարների գանձման նպատակով:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետեի ա ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի

պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասնօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատունդրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱԼԲԵՐՏ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ**

Ֆինանսական բաժին
Կատարող՝ Ս. Ասատրյան
Հեռ. 011518285